ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.96
<<ՀԱՆ-ԳՀԾՁԲ--02/17>>

ք. Երևան «27» սեպտեմբերի 2017 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ **Պատվիրատու**), մի կողմից և <<Մ-ԲԻ-Ռ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կպտարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված

վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Կատարողի կողմից մատուցված Ծառայության միավորի գները ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում, պայմանով, որ 2017թ.-ի համար սույն պայմանագրի ընդհանուր գինը չի կարող գերազանցել 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ, ապրանքների մասով ներառյալ ԱԱՀ-ն, ծառայությունների մասով առանց ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները: 2018թ.-ի համար սույն պայմանագրով նախատեսված գնումը կիրականացվի Պատվիրատուի կողմից ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում՝ համաձայնագրեր կնքելու միջոցով, պայմանով, որ այդ ժամանակահատվածում ծառայության ընդհանուր գինը չի կարող գերազանցել համապատասխանաբար հատկացված և/կամ պլանավորված ֆինանսական միջոցների չափը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելվածներ N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1]

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը

համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«Պատվիրատու»	«Կատարող»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ	<<Մ-ԲԻ-Ռ>> ՍՊԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ	ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Ի.Գասպարյան 33	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Գավառի մ/ճ
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	Հ/Հ 220083335012000
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ	ՀՎՀՀ 08417829
ՀՎՀՀ 01216144	
Գլխավոր տնօրեն _____ Ա.Գասպարյան	Տնօրեն _____ Վ. Բաղդասարյան

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 2
« 27 » 09 2017 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԾՁԲ--02/17 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71631100	ՈՒԱԶ-390945 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000
2	71631100	ՈՒԱԶ-220694 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000
3	71631100	ՈՒԱԶ-396256 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000
4	71631100	ՈՒԱԶ-220602 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000
5	71631100	ՈՒԱԶ-220602 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000
6	71631100	ՌԻՍ-500 - տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000
7	71631100	ՖՈՌԴ ՏՌԱՆԶԻՏ տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 1 200 000
8	71631100	ՄԻՏՍՈՒԲԻՍԻ ՊՐԵՍՏԻԺ տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 1 200 000
9	71631100	ԿԱՄԱԶ - 53212 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան՝ 600 000

10	71631100	ՊԻՍՏԵՆ ԲՈՒԼԼԻ ԿԱՆՅՈՆ տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել 1 000
11	71631100	ՏՐԱԿՏՈՐ ԴՏ-75 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել 400 0

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ											
	71631100		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	71631100	ՈՒԱԶ-390945 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի
2	71631100	ՈՒԱԶ-220694 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի
3	71631100	ՈՒԱԶ-396256 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի
4	71631100	ՈՒԱԶ-220602 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի
5	71631100	ՈՒԱԶ-220602 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի

6	71631100	ՌԻՍ-500 + տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան 600 000
7	71631100	ՖՈՌԴ ՏՐԱՆԶԻՏ տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան 1 200 000
8	71631100	ՄԻՏՍՈՒԲԻՍԻ ՊՐԵՍՏԻԺ տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան 1 200 000
9	71631100	ԿԱՄԱԶ - 53212 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան 600 000
10	71631100	ՊԻՍՏԵՆ ԲՈՒԼԼԻ ԿԱՆՅՈՆ տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան 1 000 000
11	71631100	ՏՐԱԿՏՈՐ ԴՏ-75 տեխնիկական սպասարկման ծառայություններ	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավել քան 400 000

Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

«Պատվիրատու»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/հ
ՀԿՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ Ա.Գասպարյան

«Կատարող»
<<Մ-ԲԻ-Ռ>> ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Գավառի մ/հ
Հ/Հ 22000583335012000
ՀՎՀՀ 02847829

Տնօրեն _____ Ա. Բաղդասարյան